

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, Նախարարության և սույն կանոնադրություններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի Նախարարի (այսուհետ՝ Նախարար), Նախարարության աշխատակազմի ղեկավարի հրամաններով, հանձնարարականներով, ցուցումներով, Նախարարի տեղակալների հանձնարարականներով և ցուցումներով:
3. Նախարարը հաստատում և փոփոխում է Վարչության հաստիքացուցակը, որը ներկայացնում է Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝ համաձայնեցնելով Վարչության պետի հետ:
4. Վարչությունն իր գործառույթներն իրականացնում է Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Նախարարության համակարգի մարմինների հետ համագործակցելով:
5. Վարչությունը Նախարարի, նրա տեղակալների և Նախարարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, դրանց ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ:

6. Վարչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրով: Վարչության աշխատանքային ծրագիրը յուրաքանչյուր տարի հաստատում է Նախարարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կարգով:
7. Վարչությունը կազմված է՝
 - 1) կանանց հիմնահարցերի բաժնից.
 - 2) երեխաների հիմնահարցերի բաժնից:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Վարչության խնդիրներն են՝
 - 1) Հայաստանի Հանրապետությունում ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,
 - 2) Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության մշակումը և դրա իրականացման համակարգումը,
 - 3) ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառը կարգավորող իրավական ակտերի միասնական կիրառման ապահովումը,
 - 4) ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը:

III. ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Բաժինն իր առջև դրված խնդիրների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները.
 - 1) ընտանիքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործմանն ուղղությամբ առաջարկությունների մշակում, դրանց ներդրման կազմակերպում.
 - 2) ընտանիքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառի իրավական կարգավորման ապահովում.

- 3) ընտանեկան և սեռի հատկանիշով բռնության, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում.
- 4) ընտանիքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված օրենսդրության միասնական կիրառումն ապահովելու նպատակով գերատեսչական նորմատիվ ակտերի և պաշտոնական պարզաբանումների մշակում, դրանք պետական գրանցման համար նախապատրաստում.
- 5) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի մշակում, առաջարկությունների ներկայացում և դրանց իրականացման կազմակերպում.
- 6) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի վերականգնում իրականացնող կազմակերպություններից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում, վերլուծում, դրանց հիման վրա առաջարկությունների մշակում.
- 7) Նախարարության քննարկմանը ներկայացված՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ ընտանիքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատում.
- 8) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկություններ մշակում.
- 9) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի հիմնահարցերի բնագավառում իրականացվող պետական նպատակային ծրագրերի կատարման աստիճանը բնորոշող ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների մշակում.
- 10) Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքների ապահովում.
- 11) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հարցերով զբաղվող կազմակերպություններին մեթոդական պարզաբանման տրամադրում.

- 12) մասնակցություն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգին.
- 13) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հարցերով զբաղվող կազմակերպություններում աշխատող մասնագետների որակավորման բարձրացման նպատակով առաջարկությունների մշակում.
- 14) Նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության հետ համատեղ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն.
- 15) քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումների և բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում, դրանցում արժարժված խնդիրների ուսումնասիրում և համապատասխան պարզաբանումների տրամադրում.
- 16) Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով ընտանիքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի լուսաբանում.
- 17) մասնակցություն երեխաների հիմնահարցերի բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը.
- 18) մասնակցություն երեխաների հիմնահարցերի բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը.
- 19) մասնակցություն երեխաների հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը

IV. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Բաժինն իր առջև դրված խնդիրների իրականացման համար, իր իրավասությունների սահմաններում, իրականացնում է հետևյալ գործառույթները.

- 1) ընտանիքի, երեխաների հիմնահարցերի բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում, դրանց ներդրման կազմակերպում.
- 2) ընտանիքի, երեխաների հիմնահարցերի բնագավառի իրավական կարգավորման ապահովում.
- 3) ընտանիքի, երեխաների հիմնահարցերի ուսումնասիրում, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակում.
- 4) ընտանիքի, երեխաների հիմնահարցերի բնագավառը կարգավորող օրենսդրության միասնական կիրառումն ապահովելու նպատակով գերատեսչական նորմատիվ ակտերի և պաշտոնական պարզաբանումների մշակում, դրանք պետական գրանցման համար նախապատրաստում.
- 5) որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողի թեկնածուների, որդեգրողների և որդեգրված երեխաների կենտրոնացված հաշվառման իրականացում.
- 6) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման իրականացում.
- 7) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում.
- 8) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի և դաստիարակության համակարգում և կազմակերպում.
- 9) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանությանն ու հասցեական օգնությանն ուղղված պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման կազմակերպում.
- 10) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, մասնավորապես առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամ երեխաներին տրամադրվող անվճար և համայնքային ֆինանսավորման աջակցությամբ, վճարովի և համավճարով սոցիալական այլընտրանքային ծառայությունների ստեղծմանն ուղղված ծրագրերի մշակում.
- 11) խնամատար ընտանիքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ապահովում.
- 12) Նախարարության քննարկմանը ներկայացված՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ ընտանիքի և երեխաների հիմնահարցերի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատում.
- 13) երեխաների սոցիալական վերականգնմանն ուղղված միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում.

- 14) երեխաների պաշտպանության ազգային (միջգերատեսչական) հանձնաժողովի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքների ապահովում,
- 15) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում խնամք տրամադրող կազմակերպություններից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում, վերլուծում, դրանց հիման վրա առաջարկությունների մշակում.
- 16) Նախարարության համակարգի և երեխաների հարցերով զբաղվող կազմակերպություններին մեթոդական պարզաբանման տրամադրում.
- 17) մասնակցություն ընտանիքի, երեխաների հիմնահարցերի բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգին.
- 18) մասնակցություն խնամք իրականացնող կազմակերպություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչների պահպանման նկատմամբ մոնիթորինգին.
- 19) երեխաների հիմնահարցերով զբաղվող կազմակերպություններում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում աշխատող մասնագետների որակավորման բարձրացման նպատակով առաջարկությունների մշակում.
- 20) ընտանիքի, երեխաների հիմնահարցերի բնագավառում իրականացվող պետական նպատակային ծրագրերի կատարման աստիճանը բնորոշող ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների մշակում.
- 21) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տվյալների շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացման և երեխաների հիմնահարցերի բնագավառի տեղեկատվական համակարգի շահագործման և ձևավորման ապահովում.
- 22) Նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության հետ համատեղ երեխաների հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն.
- 23) Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով ընտանիքի, երեխաների հիմնահարցերի բնագավառում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի լուսաբանում.

- 24) մասնակցություն սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման պետական քաղաքականության մշակման գործընթացին.
- 25) մասնակցություն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը.
- 26) մասնակցություն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը.
- 27) մասնակցություն ընտանեկան և սեռի հատկանիշով բռնության, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման ուղղությամբ առաջարկությունների ներկայացմանը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

11. Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
12. Վարչության պետը՝
 - 1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և անմիջական ղեկավարումը.
 - 2) Նախարարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ ապահովում է Վարչության կողմից նախապատրաստված Նախարարի հրամանների, այլ իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումը.
 - 3) Նախարարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ՝ Վարչության աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտահերթ ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.
 - 4) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողների ծառայողական բնութագրերը.
 - 5) Նախարարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիների ընդունելությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարում է քաղաքացիների ընդունելություն.
 - 6) Նախարարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագիրը.

- 7) իր լիազորությունների շրջանակներում այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
 - 8) իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Վարչության և այլ մարմինների փոխհարաբերությունները.
 - 9) սահմանված կարգով ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.
 - 10) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
 - 11) Նախարարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ ըստ անհրաժեշտության, Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, աշխատանքային խմբեր կազմավորելու վերաբերյալ.
 - 12) իր լիազորությունների շրջանակներում, համաձայնեցնելով Նախարարության աշխատակազմի ղեկավարի հետ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, աշխատողների, համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
 - 13) Նախարարի, Նախարարի տեղակալների կամ Նախարարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին և խորհրդակցություններին.
 - 14) իր լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, համապատասխան զեկուցումներ է ներկայացնում իր սպասարկած ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում.
 - 15) իր լիազորությունների շրջանակներում տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ.
 - 16) պատասխանատվություն է կրում Վարչության առջև դրված խնդիրների լուծման համար.
 - 17) կատարում է Նախարարության կողմից վարվող քաղաքականության մասով՝ Նախարարի, Նախարարի տեղակալների, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ Նախարարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները.
 - 18) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
13. Վարչության աշխատողներն աշխատանքի ընդունվում և աշխատանքից ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Վարչության աշխատողներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իրենց պաշտոնների անձնագրերով նախատեսված լիազորություններ, ապահովում են իրենց անմիջական ղեկավարների հանձնարարականների կատարումը և պատասխանատվություն կրում դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ լիազորությունները վերազանցելու համար: